

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԶԵԿՈՒՅՑ**

1. Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ուղղությամբ 2013 թվականի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների համակարգման շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով մշակվել են ՀՀ Վայոց Ձորի մարզի Զերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծերը և ՀՀ Սյունիքի մարզի «Տաթև» վանական համալիրի պահպանական գոտու կառուցապատման սխեմայի էսքիզային փաստաթղթերը: «Տաթև» վանական համալիրի պահպանման գոտու կառուցապատման սխեմայի էսքիզային նախագիծը քննարկվել է ՀՀ քաղաքաշինության նախարարությունում կայացած ՀՀ վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N1255-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում: Հաշվի առնելով նախագծի վերաբերյալ ներկայացված ՌՎՎԶ հիմնադրամի դիրքորոշումը, որոշվել է մշակել B&B տիպի բնակելի տների ճակատային լուծումների և լանդշաֆտային այգու հատակագծման այլընտրանքային տարբերակներ:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի քաղաքաշինական խնդիրների համակարգման միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N1255-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը:

- ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայքի 1-ին էջում առանձնացվել է «Լանդշաֆտային քաղաքականություն» բաժին, որտեղ կարելի է ծանոթանալ Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման վերաբերյալ տարեկան զեկույցներին և լանդշաֆտներին առնչվող իրավական ակտերին:

- Հաստատվել են «Սևան» ազգային պարկին հարող թվով .... գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերը: Նախագծերում դիտարկված կարևոր խնդիրներից է՝ «Սևան» ազգային պարկի սահմանից դուրս 500 մ գոտում ռեկրեացիայի զարգացման համար նպաստավոր տարածքների առանձնացումը, ինչպես նաև համայնքների տարածքներում ընդգրկված բնական և քաղաքաշինական լանդշաֆտների զարգացման միտումների կառավարումը և ընդհանուր բնութագրերի բարելավումը: Նախարարության կողմից համակարգվում են նաև Հայաստանի տարբեր մարզերի համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքները:

- Լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված

միջոցառումների ցանկի 5.3 կետի համաձայն՝ լանդշաֆտային խնդիրների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. հուլիսի 3-ի N 213 հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում անցկացվել են սեմինարներ՝ «Հանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործումը Հայաստանում» թեմայով:

- 2013 թվականի հոկտեմբերի 1-3-ը Ցետինե քաղաքում (Մոնտենեգրո) տեղի է ունեցել «Ապագայի տարածքները. լանդշաֆտի նույնականացումը և գնահատումը որպես ժողովրդավարության իրականացման միջոց» խորագրով Հանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրականացման աշխատանքների Եվրոպայի խորհրդի 13-րդ աշխատաժողովը, որտեղ ներկայացվել է «Հանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործումը Հայաստանում» թեմայով ելույթը:

- 2013 թվականի նոյեմբերի 27-ին «Գոլդեն Փելես» հյուրանոցում կայացել է Հայաստանում Հանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործման խնդիրները խորագրով աշխատաժողովը՝ Եվրոպայի խորհրդի փորձագետ՝ Նորվեգիայի ներկայացուցչի, ՀՀ նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2. Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում աջակցում է ՀՀ համայնքներում հուշարձանների վերականգնման և տարածքների բարեկարգման, բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցմանն ու բարեկարգմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, համագործակցում և մասնակցում է լիազոր գերատեսչությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ նրանց կողմից հուշարձանների տարածքների բարեկարգման, բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցմանն ու բարեկարգման նպատակով մշակվող և իրականացվող ծրագրերին:

3. Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն Երևան քաղաքում բարենպաստ, հարմարավետ կենսամիջավայր ստեղծելու նպատակով իրականացվել են մի շարք դեկորատիվ և բնապահպանական նշանակություն ունեցող կանաչապատման միջոցառումներ: Վերականգնվել և բարելավվել են Երևան քաղաքի մուտքերը: Գարնանային ծառատունկի շրջանակում մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում ընդհանուր առմամբ տնկվել է շուրջ 30.000 ծառ և 10.000 թուփ: Բարեկարգվել են բակային տարածքները Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: